չի թափոի: Երբ սայլը թաղուում է ցեխի մէջ, գոմէշները կաշուց դուրս են գալիս, չեն կարացի տեղից շարժէլ, ասա՛, Մըհէ՛, դուրս քաշէ սայլը ցեխից, — Միէն կանէ այդ, բայց սատանայական բաների նա գլուխ չունի...

— Լաւ, լաւ, Մըհէ՛, քո հոգուն մատաղ, ես այս գիտեմ, ես չէի ուզում քեզ բարկացնել, — ասաց Մարօն, իւղելով կատաղած ծառայի գլուխը: — Դու գիտես, որ Խաթունը տանը չէր, դրա համար քեզ նեղութիւն տոի:

— Էդ ուրիշ բան է... — ասաց նա եւ դուրս գնաց:

Մարօն երկար ծիծաղում էր նրա գնալուց յետոյ. նա պատմեց ինձ մի քանի յատկութիւններ Մըհէի բնաւորութիւնից:

— Զարմանալի բնաւորութիւն ունի այդ անասունը, նրան ասա՛ «Մըհէ, դու գիտես, որ այնինչ մարդուն պէտք է սպանելէ, նա իսկոյն կսպանէ. նրան ասա՛ «Մըհէ, դու գիտես, որ այնինչ մարդու երսին մի ապտակ պէտք է տալէ. նա իսկոյն կը կատարէ քո կամքը. մի խօսքով, ամէն գործ պատրաստ է նա կատարել, երբ ասես «դու գիտես»: Միայն գործը պէտք է բաւականին ծանր լինի եւ խոշոր, թեթեւ բանի համար գլուխ չունի Մըհէն:

Մարօն աւելցրուց, թէ Մըհէն իւր ամսականը ստանալու միջոցին երբեք չէ կարող ընդունել արծաթի կամ ոսկի դրամներ, ասելով, թէ նրանք շատ մանր են, եւ նա չէ սիրում թեթեւ դրամներ, այլ միշտ պահանջում է պղնձէ մեծ դրամներ, թէեւ իւրաքանչիւր ոսկու փոխարէն կը տային նրան մի-մի հատ պղինձ: Այսոամենայնիւ, կիսախելագար Մըհէն շատ հաւատարիմ էր եւ ունէր օտարոտի բարեսրտութիւններ: Նա ծեծում էր իր կնոջը, երբ նա իր երեխային զարկել կամ լացացրել էր. ծեծում էր եւ երեխային, երբ մօրը բարկացնում էր: Բայց նա միակ մարդն էր, որ սիրում էր Հասօի եզները այնպէս, որպէս նրանց տէրը: Այդ պատճառով Յասոն միշտ գոհ էր նրանից եւ փարախի լիակատար իշխանութիւնը տոել էր նրան, ուր նա, անասունների հետ միասին, բնակւում էր իր ընտանիքով:

Բացի Մըհէից ծերունի որսորդի տան սպասաւորների թւում էր պառաւ Խաթունը. դեռ նա մանկութեան ժամանակ, երբ նա տասն եւ հինգ տարեկան էր, Աւօն գնեց նրան ղաջարի սարվազներից, երբ շատ հայ կանանց հետ Խաթունին գերի էր բերում Վասպուրականի կողմերից: Այնուհետեւ թէեւ որսորդը ազատութիւն շնորհեց նրան եւ շատ անգամ առաջարկեց դառնալ իր հայրենիքը, բայց Խաթունը չուզեց հեռանալ այն տնից, ուր այնքան սիրում եւ պատւում էին նրան: Բացի դրանից, վերջին ժամանակները նա իմացաւ, որ հայրենիքում իր ազգականներից եւ ոչ մէկը չէր մնացել. մեծ